

# ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

Երզնկայի ծաղկուն հասարակական-քաղաքական կեանքի ու զարգացման բարձր մակարդակի հասած իմաստափական-գրական դպրոցի ծնունդ հանդիսացող նշանաւոր դէմքերից մէկն է ԺԻ-ԺԻ դարերի մատենագիր, փիլիսոփայ, մեկնիչ, մանկավարժ, տոմարագէտ, բանաստեղծ եւ գործիչ Կիրակոս Երզնկացին, որը մեծ հռչակ է վայելել ոչ միայն Եկեղեցաց գաւառում, այլև ողջ Հայաստանում: Չնայած դրան, նա առայժմ մնում է ճանաչուած, բայց չուսումնասիրուած հեղինակ<sup>1</sup>: Հայագիտութեան մէջ նրա մասին հանդիպում են առանձին ակնարկներ միայն, հիմնականում որպէս շարականագիր, թէեւ ոմանք մերժում են այդ<sup>2</sup>: Կիրակոսի մասին եղած կարծիքներն հակասական են առհասարակ՝ թէ՝ անձնաւորութեան, թէ՝ ապրած ժամանակաշրջանի եւ թէ գրական ժառանգութեան որոշման եւ բնութագրման հարցերում: Դա հե-

1. Արդէն իսկ ծանօթ լինելով ԺԻ-ԺԻ դարերում զարգացման բարձր մակարդակի հասած Երզնկայի գրական, քաղաքական ու հասարակական կեանքին (Հնորհիւ 1958 եւ 1962 թուերին սպագրուած Յովհ. Երզնկացի (Պլուզ) եւ Կոստանդին Երզնկացի աշխատութիւններիս, ինչպէս նաև Յովհ. Երզնկացի-Սործորեցուն նուիրուած (անտիպ) ուսումնասիրութեանս), 1960-70ական թուականներին ձեռնամուխ եղանք մանրակրկիտ հետազոտելու նաև Կիրակոս Երզնկացու մատենագրութիւնը եւ այդ հիմնա վրայ պատրաստեցինք նրա կեանքն ու ստեղծագործութիւնն ամբողջացնող եւ բանասիրական ու գրականագիտական բնոյթ ունեցող մի մենագրութիւն, որ առաջօր մնում է շտպագրուած: Հրատարակուել է մի յօդուած միայն, ուր՝ հիմնականում «Յայսմաւուրքները» նկատի ունենալով, արմատապէս լուծուել են Երզնկացուն այլ Կիրակոսներից զատորոշելու հարցերը: Տե՛ս Ա. ՍՐԱՊԵԱՆ, Բանասիրական թշգրտումներ, Պատմա-բանասիրական համելս, Երևան, 1972, թիւ 4 (50), էջ 137:
2. Տե՛ս Գիրք Աստուածաբական որ կոչի Դրախտ ցամկալի, ի Ղազարու աստուածաբան վարդապետէ Ճահկեցւոյ, Կ. Պոլիս, 1735, էջ 801-845: ԶԱՄՉԵԱՆ Հ. Մ., Պատմութիւն Հայոց, Հա. Գ., Վենետիկ, 1786, էջ 508: Նարակնոց, Կ. Պոլիս, 1815, էջ 2-5: ԱԻԳԵՐԾԱՆ Մ., Լրումն լիակատար վարուց եւ վկայարանութեանց սրբոց, Հա. Ժ.Ա., Վենետիկ, 1814, էջ ՀԵ-ՀԶ:

տեւանք է այն բանի, որ ԺԳ-ԺԴ դարերում յիշատակւում են մի քանի կիրակոսներ։ Նրանցից առանձնապէս նշանաւոր են Գանձակեցին, Արեւելցին եւ Երզնկացին։ Երեքն էլ համարուել են բացարձակապէս ժամանակակից եւ երեքն էլ վախճանուած նոյն՝ 1271-1272 թուերին։ Հայագէտներից ոմանք կիրակոս Երզնկացուն հասցըել են մինչեւ ԺԵ դարը<sup>4</sup>։

Դժուար է ասել, թէ ե՞րբ եւ ի՞նչպէս է առաջացել այս կիրակոսների շփոթութիւնը, սակայն տեւել է այնքան, որ ստեղծել է մի մեծ թնձուկ։ արձակ եւ չափածոյ որոշ գործեր տարբեր դարերում եւ տարբեր ձեռագրեր վերագրել են կամ ուղղակի կիրակոս վարդապետի՝ առանց մականուան եւ կամ մի քանի կիրակոսի՝ շխնայելով նոյնիսկ ԺԱ-ԺԲ դարերում ապրած Գրիգոր Վկայասէլ Մեծի աշակերտ կիրակոս Թարգմանչին<sup>5</sup>։ Այս գործերից են ժԳ դարում նոր ճառերով համալրուած «Յայսմաւուրքը», Յովկան Ուսկերերանի Յովկաննու Աւետարանի մեկնութեան թարգմանութիւնը, Եապրի «Լուծմունքը», «Արեւելք գերարփին» շարականը եւ այլն։

### Ո՞վ է կիրակոս Երզնկացին

Այս հարցին ուղղակի պատասխանող տեղեկութիւններ գրեթէ չեն պահպանուել։ Եզրայանգումների համար գերազանցօրէն նպաստել են Երզնկացու իր իսկ ձեռքով գրուած գործերը, դրանց ներածութիւններն ու վերջաբանները, յիշատակարաններն ու յիշատակագրութիւնները։ Որքան էլ սուզ, լրացուցիչ ծանուցումներ են պարունակում կիրակոսի աշակերտների կամ գրիշների յիշատակագրութիւնները եւս, որոնք բանալի են դառնուած օգտագործելու ԺԳ-ԺԴ դարերի նաեւ այլ յիշատակարաններ։ Այս առումով չափազանց արժէքաւոր է ձեռագրերում բաւական տարածուած մի գործ՝ «Կիրակոսի վարդապետի ասացեալ ընդիհանրական աշխարհաց, զոր գրով առաքէր ուր եւ կամէր» վերնագրով։ Սրա վերջում հեղինակ կիրակոսն ունի յիշատակարան-վերջաբան, ուր իւ մասին գրում է. «Կու հրամայէ առաքեալն Պողոս,

3. Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւմք, աշխատասիրութեամբ եւ ծանօթագրութեամբք ի լոյս ընծայեաց ՍԱՐԳԻՍԵԱՆ, թ., Վենետիկ, 1907, էջ ՃՇԱ (ծանօթագր.)։ ԱՃԱՌԵԱՆ Հ., Հայոց աթամանութենքի բառարան, Հար. թ., Երեւան, 1944, էջ 654։ ՄԵԼԻՔ-ԶԱՅՆՁԱՆՆԵԱՆ Կ., Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1961, էջ Թ, Իթ։
4. ԶԱՄՉԵԱՆ Հ. Մ., Պատմութիւն Հայոց, Հար. Գ., էջ 16, 508։ ԱԿԳԵՐԵԱՆ Ս., Լրումն իշակատար վարուց, էջ ՀԵ-ՀԶ. ԿՈՍՏԱՆՆԵԱՆ Կ., Սկրտիչ Խաղաշ եւ իւր տաղերը, Վաղարշապատ, 1898, էջ ԻԱ (ծանօթագր.)։
5. ՏԵ՛Մ Շարակմոց, էջ 2-5։

թէ այս գիր ձեռին իմոյ Պօղոսի է: Նոյնպէս եւ ես ասեմ. Այս գիր՝ ձեռին իմոյ՝ ի նուաստ կիրակոս վարդապետին է Երզընկացոյ՝ մայրաքաղաքին Հայոց Լուսաւորիչ գաւառիա<sup>6</sup>:

Ուրեմն «Ընդհամբական» հեղինակ կիրակոսը Լուսաւորչի կամ Եկեղեց քաւառից է եւ կոչում է Երզնկացի՝ նրա մայրաքալաք Երզնկացի անունով: Մակայն որոշ ձեռագրեր վերնագրերում եւս պահպանել են Հեղինակի լրիւ անունն ու մականունը, որոնցից են հետեւեալները.

«Կանոնական խրատք ընդհանրական Եկեղեցւոյ ամենայն Հայոց, կիրակոս վարդապետէ Երզնկացոյ» յԱստուծոյ ամենակալէն» ըստգրնատողով<sup>7</sup>.

«Արդիւնաբան եւ հոգիաներկ վարդապետին կիրակոսի Երզնկեցոյ արարեալ Մեկնութիւն Հարիւրաւորացն Եւագրեայ, ի ինդրոյ Յովհաննէս վարդապետի, ի նոյն գաւառէն Եկեղեց, ի սուրբ կիրակոս»<sup>8</sup>.

«Կիրակոս վարդապետի Եզնկացոյ ասացեալ, յաղագս ութ խորհրդոց Եւագրեայ»<sup>9</sup>.

«Կիրակոս վարդապետի Եզնկեցոյ Խրատք առ ուղղափառ հաւատացեալս Հայոց ազգի եւ պատասխանիք առ ասացեալսն չարեօք»<sup>10</sup>.

«Կիրակոս վարդապետի Եզնկացոյ արարեալ ի բանն, որ ասէ. ի սկզբանէ էր բանն»<sup>11</sup>.

«Ի բանն, որ ասէ. Զայն Տեառն ի վերայ ջուրց եւ Աստուած փառաց որոտաց, եւ տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց, կիրակոս վարդապետի Եզնկացոյ արարեալ. օգնեա՝ հոգի Աստուծոյ»<sup>12</sup>.

«Խրատ վասն խոստովանութեան, զոր արարեալ է Կիրակոս վարդապետի Եզնկացոյ»<sup>13</sup>.

«Զքաղուածքն Եսայեայ եւ զԴիոնէսիոսին՝ Կիրակոս վարդապետն Եզնկացին»<sup>14</sup>.

«Զօմարի մեկնիչն եւ զկազմութեան լուծմունքն՝ Կիրակոս վարդապետին է արարեալ Եզնկացոյն. զնոյն Զօմարի մեկնիչ արար Յակոբ վարդապետն Ղրիմեցի»<sup>15</sup>.

6. Զեռ. թ. 8727, ԺԷ, էջ 312ա:

7. Զեռ. թ. 3527, ԺԶ-ԺԸ, էջ 150ա:

8. Զեռ. թ. 1980, 1391, էջ 41ա:

9. Տե՛ս Կիևի Սեմբան Բ., 8ուցակ ձեռագրաց Ղալաքիոյ ազգային Մատենադարանին Հայոց, Անթիւմաս-Լիբանան, 1981, էջ 708, հաւաքածոյ թ. 108, 1745 թ., էջ 87-99:

10. Զեռ. թ. 2288, 1683-1689 թթ., էջ 4բ, 2283, 1355 թ., էջ 87ա:

11. Զեռ. թ. 1098, 1320 թ., էջ 110ա:

12. Զեռ. թ. 2187, 1346 թ., էջ 105ա:

13. Զեռ. թ. 2335, 1476 թ., էջ 302բ:

14. Անևսեսն Յ., Հայկական մատենագիտութիւն, Համ. Ա., Երեւան, 1959, էջ LXII:

15. Անևսեսն Յ., էջ LXIV:

«Լուծումն Բնութեան գրոցն, արարեալ Կիրակոսի Եղնկացոյ»<sup>16</sup>.

«Կիրակոս վարդապետի խրատք վասն կրթութեան եւ օգտութեան, Երզնկեցոյ. աւգնեա»<sup>17</sup>:

Ինչպէս տեսնում ենք, այս գործերից եւ ոչ մէկում Կիրակոսն իրեն Գանձակեցի, Արեւելցի կամ ա'լլ մականուամբ չի կոչել: Մինչդեռ նրանցից մի քանիսը ցոյց են տալիս ոչ միայն այն իրողութիւնը, որ դրանց հեղինակը Եկեղեաց գաւառից է՝ Երզնկացի, այլեւ բաց են անում նրա միջավայրի, կեանքի, փոխյարաբերութիւնների ու ստեղծագործութեան մասին մօտաւոր հետեւութիւնների յանդեցնող ուրիշ ուղիներ եւս: Բացի այդ, իրենց մէջ պարունակած որոշ բնութագրական տեղեկութիւններով նրանք բանալի են Հանդիսանում զատելու Երզնկացու մի քանի այլ Երկասիրութիւններ եւս, որոնք մեզ են Հասել կամ միայն Կիրակոս անուան յիշատակութեամբ, կամ անանուն ու անխորագիր՝ գոնէ ըստ առայժմ յայտնի ծեռագրերի, եւ ինչ-որ չափով վերականգնել հեղինակի կենսագրութիւնը:

Առանձնապէս արժէքաւոր ծանուցումներով նշանակալից է վերը յիշուած «Հարիւրաւորքի» մեկնութիւնը, որ, ինչպէս տեսանք, վերնագրուած է «Արդիւնարան եւ Հոգիաններկ վարդապետին Կիրակոսի Եղնկեցոյ արարեալ մեկնութիւն Հարիւրաւորացն Եւագրեայ, ի խընդրոյ Յովկաննէս վարդապետի, ի նոյն գաւառէն Եկեղեաց, ի սուրբ Կիրակոս»<sup>18</sup>: Արա վերջարանում մեկնիչն անում է հետեւեալ լրացուցիչ լուսաբանութիւնը. «Արարի զվերլուծութիւն Հարիւրաւորացս սուրբ Հօրն Եւագրեայ..., հրամանաւ եւ աղօթիւք երկուց վարդապետացն հովանուանքար Յովկաննէս առձայնելոց եւ այլ Եղարցոց»<sup>19</sup>:

Ընդգծուած տողերը ցոյց են տալիս, որ խօսքը վերաբերում է ո՛չ թէ մէկ, այլ Յովկաննէս անունով երկու անձնաւորութեան, որոնց հետ մեր հեղինակի փոխյարաբերութիւնը պարզաբանելը կարեւոր հանգամանք է ո՛չ միայն կենսագրական, այլեւ ստեղծագործական առումով: Մեկնութեան յիշատակարանում Հանդէս եկող այս Յովկաննէսներից մէկը, որ, ինչպէս տեսանք, մեծաբանում է խորագրում եւս՝ որպէս պատուիրատու, ներկայանում է նաեւ «Անդիւն եւ հանճարեղ բարունապետ» մակղիմներով: Մեծարանքի նման ածականներով է նա օժանդուում Եւագր Պոնտացու այս չափազանց խրթին, ծանր ու լուրջ գործի խորիմաց մեկնութեան թէ՝ առաջարանում եւ թէ վերջարանում: Աշ-

16. Տե՛ս ԿիւլեՍեՐԵԱՆ Բ., Յուցակ ձեռագրաց..., էջ 550, Հաւաքածոյ թ. 84, 1675, 1684 թք.: Տե՛ս նաև էջ 559, 592, 708, 978:

17. Տե՛ս ՍԱՐԳԻՍԵԱՆ Բ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարամին Միթքարանց ի Վենետիկի, Հու. Բ., Վենետիկ, 1924, էջ 733, Զեռ. թ. 253, (869), Ուկեփորիկ, ԺԴ, էջ 88:

18. Զեռ. թ. 1980, էջ 41ա, 1812, 1780 թ., էջ 209ա:

19. Զեռ. թ. 1980, էջ 160թ (ընդգծումը Ա.Ս.):

իստութեան իր մեկենասին Կիրակոսը դիմում է ակնածանքի ու փառաբանման այնպիսի յորդ զգացումներով, որ նոյնիսկ հասցնում է Յովհաննէս Մկրտչի հետ համեմատուելու աստիճանին. «Ներհուն եւ հանձարեղ շաբունապես Յովհաննէս, հոմանուն ձայնի բանին եւ համախառակ արեգակալան արդարութեան Կարապետին, զնուաստ եւ զապիկար եւ զյետին սպասաւոր բանի, մի անգամ եւ երկիցս հարկեցեր եւ սիրով գրաւեցեր առնել լուծումն Հարիւրաւորացն սուրբ հարն Եւագրեայ, որ արդարեւ ձեղի է յարմար այսպիսի գործառնութիւն»<sup>20</sup>:

Ուրիշ առիթով պարզում է, որ այս նշանաւոր Յովհաննէս ըրբունապետը պատահական անձնաւորութիւն չէ Կիրակոսի կեանքում եւ ո՛չ էլ պատահական պատուիրատու, այլ սերտ փոխյարաբերութեան եւ գիտական գործակցութեան մէջ մտած մէկը: Նրա յորդորներով է Կիրակոսը մեկնել Եւագրի երկորդ նշանաւոր երկասիրութիւնը եւս, որ տարածուած է ձեռագրերում «Յաղագս ութիւնորհուցոցն» կարճառուութեամբ: Այստեղ մեկնիչը գրում է. «Իբրև ծանեա'յ զիմնդիրս ձեր, պատուելի բարունապետ Յովհաննէս, եւ որք մի անգամ ընդ քեզ եղբ բղբարք, յո՛յժ ուրախացայ, զի բարի եւ գովելի մասինն եղէք փափագող, սակայն հայելով ի մտաց իմոց տկարութիւն եւ յիւր ողորմութեանցդ մեծութիւն եւ բարձրութիւն, յայժ զարմութեցայ...: Այլ թէպէտ այսպէս է ճշմարտապէս, սակայն ամենայն ինչ հնարաւո՞ր է այնմ, որ հաւատայն:... նոյնպիսի յոյսով եւ ե՛ս հաւատամ աղօթիւք ձերովք արձակի ի կապանայ ամլութեան մտաց:... Վասն որոյ օժանդակեցէ՞ք աղօթից ձերոց թեւօք փոքր մակուկի մտաց մերոց, զի հողմով հոգոյն ի նաւահանգիստն հասից կատարման...»<sup>21</sup>:

Ի լրումն սրանց՝ կարեւոր է նշել մեր ձեռագրերում պահպանուած «Բանք խրատականք» խորագրով աշխատութիւնը եւս, որ չափազանց արժեքաւոր է հեղինակի ո՛չ միայն կենսագրութիւնն ու ստեղծագործութիւնը, այլեւ աշխարհայեցութիւնը բնութագրելու համար: Գործն անհեղինակ է, սակայն նիկին ամբողջութեամբ յագեցուած է Կիրակոսի «Լնդհանրականի» ոգով ու ոճով: Գործի առաջարանն աւելի եւս հաւաստում է այդ, որ սկսում է այսպիսի տողերով. «Ամենայն, որ խնդրէ ի քէն, տո՛ւր. ասէ տէրունական հրամանն: Եւ զի հարկեցեր զմեզ, սիրելի եղբայր Յովհաննէս, առաւել քան զկար մեր, ձեռնարկել ի գործ, զոր պարտ էր խնդրելի պատեհագունէ եւ զաւրաւորէ ումեքէ, այլ զի մի՛ ի պատիժ անհնազանդութեան անկանիցիմք..., հարկեցեալ հնազանդեցաք հրամանաց քոց, եւ դու աղաւթեա' ի վերայ մեր մտեր-մարար»<sup>22</sup>:

20. Անդ. էջ 41ա-բ:

21. Զեռ. թ. 228, 1457 թ., էջ 209թ - 210թ (ընդգծումը Ա. Ս.):

22. Զեռ. թ. 8856, 1322 թ., էջ 176ա:

Գործի բանասիրական, գրականագիտական վերլուծութիւնը, որ կատարել ենք մեր անտիպ աշխատութեան մէջ, հաստատում է, որ նրա հեղինակը կիրակոս Երզնկացին է։ ուրեմն մի երրորդ երկասիրութիւն եւս գրուած է նոյն Յովհաննէս վարդապետի հրամանով եւ աւելի վաղ, քան վերոյիշեալ մեկնութիւնները։ «Բանք խրատականք»ը ինչպէս ցոյց է տալիս գրչութեան թուականը (1322), աւարտուած էր «Հարիւրաւորք»ից (1354 թ.) աւելի քան 32 տարի առաջ, երբ պատուիրատուն անհամեմատ երիտասարդ էր եւ դեռևս միայն վարդապետ։ Այստեղ կայ հեղինակի աւելի մտերմիկ շեշտ, անկաշկանդ մօտեցում եւ լեզու, դուռով դիմելու համարձակութիւն եւ իրաւունք։ Ինչպէս հետեւում է մէջբերումից, պատուէրը չի տրուել պաշտօնապէս՝ ի վերուստ, այլ մտերմօրէն, խորհրդի ձեւով, որպէս հոգեւոր յորդորանք։ Գուցէ եւ այդ տարիներին պատուիրատուն դեռևս րաբունի կամ րաբունապետ չէր, սակայն ունէր գիտական եւ վարդապետական այնպիսի հեղինակութիւն, որ կարող էր «Հարկել» կամ «Հրամայել» կիրակոսին՝ գրելու այդ Խրատականը։ Ո՞վ էր յետագյում այլշափ ճանաչուած ու հոչակաւոր րաբունապետ Յովհաննէսը, այդքան գովեստների արժանի։

Բարձր Հայքի վանքերին նուիրուած իր ուսումնասիրութեան մէջ Համագասապ Ասկեանը, հաւանաբար ենելով «Հարիւրաւորք»ի խորագրից, ենթագրում է, թէ 1330-1350ական թուականներին Երզնկայի Ս. Կիրակոսի վանքի առաջնորդը Յովհաննէս վարդապետն է<sup>23</sup>։ Սակայն ո՞վ էր նա: Բոլոր դեպքերում, որոշակիորէն, այդ Յովհաննէսը ո՞չ Պլուզն էր եւ ոչ էլ Մործորեցին։ Նրանցից առաջինն արդէն վախճանուած էր 1293 թ., իսկ երկրորդը՝ 1338ին<sup>24</sup>։ Մինչդեռ Կիրակոսի յիշատակած մեծ րաբունապետ Յովհաննէսը ժի՞ դարի կէսերին դեռ կենդանի էր եւ շարունակում էր պատուէրներ տալ Կիրակոսին<sup>25</sup>։ Իսկ ո՞վ էր երկրորդ Յովհաննէսը, որին նոյնպէս յատուկ յիշում է Կիրակոսը եւ որի եթէ ոչ հրամանով, ապա գէթ աղօթքներով ոգեւորուել է «Հարիւրաւորք»ի մեկնութեան հեղինակը, երախտագիտութեան խօսքեր ուղղել նրան։

Այս Հարցը պարզելու համար օգնութեան են գալիս յիշատակարանները եւ Կիրակոսի մէկ այլ աշխատութիւններ, «Խրատ առ ուղղափառ հաւատացեալսն» խորագրով, ուր նոյնպէս հանդիպում են Յով-

23. Տե՛ս ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, էջ 88։

24. Տե՛ս ՍՐԱՊԵԱՆ Ա., Եռվանամետ Նրգնկացի, Երեւան, 1958, էջ 25-38, եւ Մործորեցուն նուիրուած մենագրութիւնը, որ անտիպ է։ Այստեղ մանրամասնորէն ուսումնասիրուել է նրա կեսնքն ու ստեղծագործութիւնը, ճշուել նաև մահուան թուականը, որ՝ ըստ ձեռագրի 1338ն է։

25. Ինչպէս էր տեսնենք յաջորդ էջերում, Կիրակոս Երզնկացին իր «Հարիւրաւորք»ի մեկնութիւնը կատարել է նոյն Յովհաննէս րաբունապետի պատուէրով՝ 1354 թ., որ էր կարող Մործորեցին լինել։

հաննէս անուանը: Սրա առաջաբանում կարդում ենք. «Հնկալայ նը-  
ւաստ Կիրակոս եւ Յովհաննէն վարդապետ զնամակ հրամանի աղ-  
նուական, ընտրեալ եւ պատուական ծնունդ մեծարոյս մտաց ձերոց  
տեսութեան...: Վասն որոյ, իբրեւ լուաք եւ ծանեաք ի գրոյ աստի  
զիմաստութիւն մտաց ձերոց..., յոյժ գոհացաք զԱստուծոյ»<sup>26</sup>:

Սա Կարնոյ միաբան Սարգիս քահանայի նամակին ի պատասխան  
գրուած եւ մի շարք դաւանաբանական հարցերի նուիրուած յայտնի  
գործն է, «Թուղթ առ կարնեցիս» անուանումով եւս: Ինչպէս երեւում  
է վերը բերած հատուածից, նամակն ուղղուած է Կիրակոս եւ Յով-  
հաննէս վարդապետներին: Պէտք է ենթադրել, որ վերջինս չէր կարող  
լինել վերոյիշեալ Յովհաննէս բարունապետը, այլապէս Կիրակոսը  
նամակին կը պատասխանէր նախ նրա, գուցէ եւ միայն նրա անունով,  
«չմոռնալով» մեծարանքի ընդունուած ոճը, որ տեսանք նախորդ գոր-  
ծերում: Մինչդեռ այստեղ ո՛չ միայն չկայ դա, այլեւ նամակին պա-  
տասխանում է միայն Կիրակոսն իր անունից: «Թղթի» ամբողջ շարա-  
դրանքում Յովհաննէս վարդապետն այլեւս չի՝ յիշուած: Այս հանգա-  
մանքն աւելի հիմք է տալիս ենթադրելու, թէ նշուող Յովհաննէսն այն  
երկրորդ վարդապետն է, որի ո՛չ թէ «Հարամանով», այլ աղօթքներով,  
յուսադրող եւ ոգեսորիչ խօսքերով, գուցէ եւ օժանդակութեամբ է  
Կիրակոսը մեռնարկել «Հարիւրաւորք»ի մեկնութիւնը: Թէ իրօք նա  
ունեցել է օգնող, նոյնիսկ մշտապէս գործակցող մէկը՝ Յովհաննէս  
անունով, վկայում են նրանց կենդանութեան օրօք, յաճախ իրենց իսկ  
ձեռքով գրուած յիշատակարանները:

1334 թուին Երզնկայում գրուում է «Մեկնութիւն չորեքտասան  
թղթոց Պաւղոսի առաքելոյն» երկասիրութիւնը՝ «սիրահարուստ վար-  
դապետ», «պատուական», «բանիբուն», «գերջանիկ եւ զանհուն բա-  
րունապետ», «զկայժակնամաքուր վարդապետաց վարդապետն» Կիրա-  
կոսի համար<sup>27</sup>:

Սակայն Կիրակոսը ո՛չ միայն ստացողն է, այլեւ գրիչներից մէկը,  
որ ունի հետեւեալ չափածոյ յիշատակագրութիւնը.

«Ազքանազեանը գըրո՞հի,  
Թուաբերութեանս համարի,  
Եւթն հարիւր ընդ ութսուն եւ երրորդի,  
Զրաւ եղեւ այսմ տառի,  
Ի գաւառիս Եղնկայի,  
Ի իսանութեան Բաւասիտի,  
Հայոց Լեւոն թագաւորի.

26. Զեռ. թ. 1337, 1706 թ., էջ 228ա-229բ (ընդգծումը՝ Ա. Ս.):

27. Սրա գրիչներին, մանաւանդ Թորոսին, հանդիպում ենք յաճախ՝ Կիրակոսի հետ  
գործակցելիս:

Կիրակոս մեղաւք մեռեալս ոգի,  
Որ սպասաւոր գրավ բանի,  
Ստացող եղէ այս մատենի՝  
Ի յարգասեաց այլոց՝ ձրի...»<sup>28</sup>:

Այս նշանակում է, թէ իրօք ձեռագըի ստացողը յայտնի Կիրակոս Երզնկացին է:

Ձեռագըրի գրիչներն են նաեւ Թորոսը (որ միաժամանակ ծաղկողն է ու նկարիչը) եւ Մանուէլը: Վերջինս իր յիշատակագրութեան մէջ ասում է.

«Զստացաւդ գրոցս զկայծակնամաքուր վարդապետաց վարդապետն զկիրակոս եւ զեղարորդին իւր զՅովհաննէս վարդապետ յիշեա՛, ո՛ ընթերցող, ի տէր, ամէն»<sup>29</sup>:

Կիրակոսի եղբօրորդի Յովհաննէսի գոյութիւնը հաստատում են մեր Մատենադարանում պահպանուած եւ այլ ձեռագրեր, որոնցից մէկն է 1317 թ. գրուած թիւ 353 Աստուածաշունչը: Սրա ստացողը եւ գրիչներից մէկը դարձեալ նոյն Կիրակոս Երզնկացին է: Միւսներն են՝ վերոյիշեալ Թորոսը (որ այստեղ եւս նաեւ ծաղկողն է), Կարապետը, Տիրացուն, Մովսէսը: Ահա թէ ինչ է յայտնում Թորոսն իր չափածոյ յիշատակարանում.

«Ամենունակ Տէրդ բարի,  
Պարունակաւողդ բոլորի,  
Եւ ինսամածու մարդկան սեռի,  
Բաբունոյ Կիրակոսի,  
Եւ Յովհաննէս Էարտուլարի  
Եւ Թորոսի կրանաւորի,  
\* \* \* \* \*

Լեր դու քաւիչ յայս աշխարհի...»<sup>30</sup>:

Ի վերջոյ, Կիրակոս Երզնկացին ինքը եւս հաստատում է այս Յովհաննէս քարտուղարի իր եղբօրորդին լինելը: Նա գրում է. «Զանպիտան գծող եւ զստացաւդ սուրբ տափիս եւ զեղարորդիս իմ զՅովհաննէս սարկաւագ, որ զանձն ի յաշխատան եղ շամակից լինել մեզ՝ մանամդ քէ զյուղ մասն սա գրէ, զամն որոյ աղաչեմ յիշեա՛ի տէր զիս՝ զապիկարս Կիրակոս եւ զՅովհաննէս, եւ գծնաւզսն մեր, եւ Աստուած զյիշողսդ յիշէ, ամէն...»<sup>31</sup>:

28. Զեռ. թ. 1379, 1334թ., թշ 354թ:

29. Նոյն տեղում, էջ 271թ.: Նոյնը՝ էջ 354թ:

30. Զեռ. թ. 353, 1317թ., էջ 203թ:

31. Զեռ. թիւ 353, էջ 70թ.: Այս նշանակում է, թէ թիւ 353 ձեռագիրը գրուել է ո՛չ թէ դկաճորում, այլ Երզնկայում: Ձեռագրաց ցուցակում վայրը նշուած է հարցականով:

Այսպիսով ո՞չ միայն ճշտում է, թէ սոյն ձեռագրի ստացողն իրօք Երզնկացի Կիրակոսն է, այլեւ մէկ անդամ էլ հաւասարում է, թէ երկրորդ Յովհաննէս վարդապետը նրա մշտական ջանակիցն ու գործակիցն է, նրա քարտուղարը, հարազատը՝ եղբօրորդին։ Ինչպէս տեսնում ենք, 1817 թուին Յովհաննէս քարտուղարը գեռեւս սարկաւագ էր եւ ոչ վարդապետ։ Մրանից առաջ՝ 1309 թուին եւս, թիւ 3931 ձեռագրում կարդում ենք. «Գրեցաւ նամակ Տաւնակիս<sup>31</sup> հրամանաւ եւ արդիւնաբան սուրբ քարունիյն Կիրակոսի, ձեռամբ իմով Յովհաննէն գծողի։ Արդ աղաչեմ զամենէսն՝ վասն սիրոյն Քրիստոսի՝ անմեղագրի լինիք խոշորութեանն եւ խալաթութեանն, զի անհմուտ էի գրոցս այս, եւս առաւել աւրինակիս, որ չէի ամենեւին լսել զսայ»<sup>32</sup>, «Ո՛վ եղբայր Կիրակոս, խոշորութեանն եւ սիմալանաց անմեղագրի լեր, զի երկու դաս առաջի եղեալ կայ, տագնապիմ»<sup>33</sup>:

Նման եւ աւելի մտերմիկ շեշտով գրուած մի յիշատակագրութիւն է պահպանուել Վենեստիկի Մխիթարեան մատենադարանի թիւ 268 Ունկեփորիկում եւս, որ, մեր կարծիքով, դարձեալ վերաբերում է նոյն Կիրակոս եւ Յովհաննէս Երզնկացիներին։ Այստեղ ասւում է. «Ո՛վ արքա իմ եւ տէր քարունի բարի եւ իմաստուն, համայն ցանգալի Կիրակոս, զսակաւ գծեալս ընկալ ի մէջն եւ զքո աղքատս հոգով Յովհաննէս մի՛ մոռանայր ի մաքրափայլ յաղօթս քո, իսկ գրոյս անմեղագրի լեր, զի կար իմ այսչափ էր»<sup>34</sup>:

Հայագիտութեան մէջ այս Յովհաննէսը նոյնացուել է Յովհաննէս Մործորեցու հետ<sup>35</sup>, սակայն ձեռագրական տուեալների մանրակրկիս քննութիւնը, ինչպէս կը տեսնենք գործի ընթացքում, հերքում է այդ կարծիքը։

31ա. Զեռ. Տօնականիս՝ ամ գրչի ձեռքով ջնջուած։

32. Զեռ թիւ 3931, 1309 թ., էջ 272բ-273ա։

33. Անդ. էջ 344բ։ Զեռագրի 345բ էլուուեւս կայ մի յիշատակագրութիւն, որ յիշատայի է (Մերարու Սմբատանի) եւ իրականութեանը չի համապատասխանում։

34. ՍՍՐԳԻՒՍԵԱՆ Բ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատունադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Հայ. Բ., Վենետիկ, 1924, էջ 882, Ուկեփորիկ թիւ 288, ԺԴ (մօտ 1230-1298 թթ.), էջ 291ա։ Յիշատակագրութիւնը յաշորդում է Դիռնիսիսի Լուծմունքին, որ գրել է Յովհաննէսը՝ Կիրակոսի համար։ Թէ՛ այս եւ թէ նախորդ յիշատակարանի Յովհաննէսին Լ. Խաչիկեանը ենթագրում է Մործորեցուն։ տե՛ս ԽԱԶԻԿԵԱՆ Լ., ժԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Երեւան, 1950, էջ 60, 61, 722։

35. Տե՛ս ՅՈՎԱԿԵՓԵԱՆ Գ., Գրչութեան արուեստը իին հայոց մէջ, մասն Գ., Վաղարշապատ, 1913, էջ 45։ Մի էջ հայ արուեստի եւ մշակոյրի պատմուքիմից, Հակէս, 1980, էջ 13։ ԽԱԶԻԿԵԱՆ Լ., ժԴ դարի... յիշատակարաններ, էջ 60, 61, 722։ ՔԻՒՐՏԵԱՆ Յ., Երիկա եւ Եկեղեց գաւառ, Հայ. Ա., Վենետիկ, 1953, էջ 228, 238-237։

Նկատի ունենալով մեր Մատենադարանի թիւ 206 Աստուածաշունը, Գ. Յովսէփեանը գրում է. «Այդ մի Աստուածաշունչ է դարձեալ, մեր միջնադարեան ամէնից նշանաւոր Գլաճորի դպրոցի գործ, մի իսկական գլուխգործոց ժամանակի գրչութեան եւ մանրանկարչական արուեստի, պատրաստուած իր լաւագոյն աշակերտների կողմից Եսայի Նէցու համար...: Կիրակոս Երզնկացի, Առա Եղօրօրդիմ Յովիաննէս Երզնկացի, որ եւ Ծործորեցի նշանաւոր գրիչն ու մատենագիրը, Թորոս Տարօնեցի բազմաշխատ մանրանկարիչը եւ այլն, իրենց արուեստի լաւագոյն բաժինը նուէր են բերել ժամանակի մեծ վարդապետին»<sup>36</sup>:

Այս նոյն շփոթութիւնն է արտայայտուած հեղինակի աւելի վաղ ըրջանում գրուած մի գործում եւս<sup>37</sup>: Յետագայում նա ազատուած է այդ կարծիքից, բայց ոչ շփոթից, չկարողանալով զատորոշել երկու Յովհաննէսներին: Այս անգամ նոյնացնելով Պլուզ եւ Ծործորեցի մատենագիրներին, նա զգուշացնուած է, թէ Կիրակոս Երզնկացու եղբօրորդի Յովհաննէսին պէտք չէ շփոթել «նոյնանուն եւ նոյն քաղաքացի նշանաւոր մատենագրի հետ: Յովհաննէս գրիչ Երզնկացին Կիրակոս Երզնկացու եղբօր որդին էր»<sup>38</sup>:

«Բայց աւաշին սկիզբն գրութեան սորա եղեւ ի գաւառին Վայոց ձոր Կոչեցեալ..., ձեռամբ ուրումն սրբազն Քահանայի՝ առն իմաստնոյ եւ նարտարի, որ էր ամենայն աստուածաշունչ կտակարանաւէ վարժեալ՝ սպասաւոր գոլով բանի՝ մերձ ի կատարելութիւն, Յովիաննէս անուն, որ էր ի հոչակաւոր քաղաքէն Եզմկայ կոչեցեալ: Արդ զկէս մեկնչի Սալմոնիս գրեաց սոյն այր, եւ ապա սակաւ ինչ այլ ուն Վարդան անուն, ի նահանկէն Կիլիկիոյ...»<sup>39</sup>:

Ինչպէս տեսնում ենք, Մեկնութեան վերը բերուած տողերը գըրուած են 1302 թուին եւ վերաբերում են մի Յովհաննէս Երզնկացու, որ այդ տարիներին արդէն իսկ հոչակ ու ճանաչում վայելող մի անձնաւորութիւն էր, մեծարտում էր «իմաստուն», «Ճարտար» եւ «մերձ ի կատարելութեան» հասած լինելու բնութագրումներով: Անշուշտ սա չէր կարող լինել Կիրակոսի եղբօրորդին: Նրան վերաբերող յիշատակարաններից քիչ առաջ տեսանք, որ մինչեւ 1317 թիւը, գուցէ եւ դրանից յետոյ որոշ ժամանակ, նա գեռեւս սարկաւագ էր, մի համեստ աշխատաւոր, առանց յաւակնութիւնների, եւ մշտապէս ներկայանում

36. ՅՈՎՍԵՓԵԱՆ Գ., Մի էջ հայ արուեստի եւ մշակոյքի պատմութիւնից, էջ 13:

37. ՅՈՎՍԵՓԵԱՆ Գ., Գրչուքեան արուեստ եին հայոց մէջ, մասն Գ., էջ 45:

38. ՅՈՎՍԵՓԵԱՆ Գ., Խարդակեամբ կամ Պոռշեամբ Հայոց պատմութեան մէջ, մասն Երկրորդ, Երուսաղէմ, 1942, էջ 244, Բ. Հրատարակութիւն, Անթիւմա-Լիքանան, 1969, էջ 283:

39. Ձեռ. թիւ 6558, 1302, էջ 637 (Ընդգծումը՝ Ա. Ս.), հմտ. ԽԱԶԻԿԵԱՆ Լ., ԺԴ դարի... յիշատակարաններ, էջ 5-6:

էր որպէս իր հօրեղօր անքաժան ընկերակիցն ու գործակիցը միայն: Այդպէս չէր Մործորեցի Յովհաննէսը: Այդ չեն ասում նրա անունով մեզ հասած տեղեկութիւնները: 1317 թուից տարիներ առաջ, առայժմ յայտնի տուեալններով՝ 1314 թուին, Մործորեցի Յովհաննէսը ոչ միայն վարդապետ էր, այլև նշանաւոր, ճանաչուած դէմք, մի քանի գործերի ու մեկնութիւնների հեղինակ, որ ամէն անգամ պարտադիր կերպով յիշեցնում էր իր Մործորեցի մականունը եւս:

Երկրորդ նշանաւոր ձեռագիրը, որ նկատի ունի Գ. Յովհաննէսը, մեր Մատենադարանի թիւ 206 Աստուածաշղունչն է: Գրիչները մի քանիսն են. Նրանց մէջ երկուսը կոչւում են Կիրկէ (Կիրակէ, Կիրակէ) եւ Յովհաննէս անուններով: Վերջին յիշուում է երկու տեղ: Գ. Յովհաննէսնեանը ենթադրում է երկու տարրեր Յովհաննէսներ, մէկը՝ Մործորեցին, միւսը՝ Կիրակսի եղբօրորդին<sup>40</sup>: Սակայն յիշատակագրութիւնները նման ենթադրութեան հիմք չեն տալիս: Ձեռագրի 577ր էջում հանդէս եկող Յովհաննէսը իրեն կոչում է ճիշտ այնպէս, ինչպէս նախորդ՝ 549 էջինը: Այսպէս. էջ 549. «Ձնուաստ գծող Յոհաննէս սպասաւոր բանի, յիշեա», էջ 577. «Ձնուաստ գծող սորին զՅոհաննէս սպասաւոր բանի, երգնկայեցի, որ եւ Մործորեցի»: Ինչպէս տեսնում ենք, երկրորդ յիշատակարանը լրացնում է առաջիկ անորոշութիւնը, բացակոչելով Յովհաննէսին Երզնկացի ու Մործորեցի: Տարակոյս չի մնում, որ տարրեր էին ուում հանդէս եկող Յովհաննէսը միեւնոյն անձնաւորութիւնն է՝ Յովիհաննէս Մործորեցին: Կիրակոսի եղբօրորդին, ինչպէս եւ Կիրակոսը, այս ձեռագրի գրչութեան մէջ մասն չունեն: Գ. Յովհաննէսը Կիրկէի մէջ ենթադրում է տեսնել Կիրակոս Երզնկացուն, որ, սակայն, ճիշտ չէ: Կիրակոսը ոչ մի տեղ Կիրկէ՝ Կիրակէ կամ Կիրակէ չի յիշում: Աւելացնենք եւ այն, որ Կիրկէի ու Յովհաննէսի միջեւ այստեղ ազգակցութիւն կամ գործակցութիւն յիշեցնող որեւէ երանդ չկայ. մինչդեռ այդպէս չէ Կիրակոս եւ Յովհաննէս Երզնկացիների առկայութեան դէպքում, ինչպէս տեսանք Քիչ վերը:

Մործորեցուն շատ, գրեթէ միշտ հանդիպում ենք առանձին, առանց որեւէ Կիրակոսի հետ կապուելու, իսկ այս Յովհաննէսին, մինչեւ իր հօրեղբայր Կիրակոսի մահը, շարունակ նրա հետ ու ամէն անգամ փոխադարձաբար իրար մտերմիկ շեշտով յիշելիս:

Մործորեցու եւ Կիրակոս Երզնկացու եղբօրորդի Յովհաննէսի նոյնութեան մասին աւելի հաստատու հայեացք ունի Յ. Քիւրտեանը: / Նա գրում է. «Մենք այս մասին Յովհաննէս Երզնկացի Մործորեցիի (եղբօրորդին Կիրակոսի) վրայ խօսած ատեննիս արդէն պիտի ծան-

40. Գ. ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ԽՈՐԱԿԵԱՆԻ ԿԱՄ ՊՈՌԵԱԱԲՔ, ԺԱՄՆ ԵՐԿՐՈՐԴ, ԷՋ 224-227:

րանանք»<sup>41</sup>, «գիտենք թէ (Ծործորեցին) կիրակոս վարդապետ Երզընկացիի եղբօրորդին է»<sup>42</sup>, «Ես ալ Գարեգին Սրբազն Յովսէփեանի հետ կ'ընդունիմ, որ վերը յիշուած Յովհաննէս Երզնկացին կիրակոս Երզընկացու եղբօր որդին էր»<sup>43</sup>:

Հակառակ սրան, Ծործորեցու հետ մէկտեղ ձեռագրի վրայ աշխատած ենք գտնում Վարդան անունով մէկին, որին յատուկ յիշում է ինքը Ծործորեցին եւս, որպէս ուսումնակից եղբայր: Վերը բերած յիշատակարանի մէջ, ինչպէս տեսանք, գրուած էր: «Արդ զի՞ս մեկնչիս Սաղմոսիս գրեաց սոյն այր (Յովհաննէս), եւ ապա սակաւ ինչ՝ այլ ուժն Վարդան անուն, ի նահանակէն կիլիկիոյ»<sup>44</sup>:

Ծործորեցին ինքը եւս Դանիէլի իր կատարած մեկնութեան յիշատակարանում ասում է: «... եղեւ աշխատութիւնս մեր ի նպաստաւորութենէ Հոգուոյն սրբոյ եւ սրբոց հարցն մերոց վարդապետացն առաջնորդաց հիպողիտից Եփրեմի եւ Վարդան վարդապետի եւ այլոց, ի թուիս Հայոց ԶԿէ (1318)...»<sup>45</sup>:

Փոքր ինչ ստորեւ՝ «ձեռամք նուաստ սպասաւորի Յովհանիսի Եղընկեցոյ, ի խնդրոյ Եղբօր մերոյ բանի աշակերտելոյ Վարդան կոչեցեալ Վարդապետի...»<sup>46</sup>:

Պէտք է ենթադրել, որ 1318 թուին արդէն վարդապետ գարդած այս Վարդանը, որ Ծործորեցու հետ աշակերտել է նոյն ուսուցչին եւ գործակցել նրան, 1302 թուին յիշուող նոյն անձնաւորութիւնն է: Ստորեւ կը տեսնենք, որ Ծործորեցու ուսուցիչ Եսայի նչեցու աշակերտների թում իրօք յիշում է եւ Վարդան անունով մէկը: Ահա ինչ է գրում Ալիշանը: «Յիշին եւ Ստեփանք եւ Յովհաննէս ոմանք աշակերտք Եսայեայ՝ առանց մականուան, - եւ Վարդան ոմն, որ ի վերոյիշեալ ձեռագրի գործոց Նիւացուոյն եւ Կլայեցուոյն գրէ չափաւ բան մի, տնապլու կարգելով զտառս անուան իւրոյ, եւ ի վերջին տողն յաւելու.

Եսայիս վարժապետի,  
Զիմանալի հաց ծասկողիս,  
ի Վարդանայ աշակերտի...»<sup>47</sup>:

Այսպիսով, վերոյիշեալ ձեռամքերը կիրակոսի կենսագրութեան մէջ ո՛չ միայն հաստատեցին երկու՝ եւ ո՛չ մէկ, Յովհաննէսների գո-

41. ՔիիրՏՑԱՆ 8., Երիգա եւ Եկեղեց գաւառ, Հա. Ա., էջ 228: Խօսքը վերաբերում է կիրակոսի Գլամորում լինելու հարցին:

42. Անդ, էջ 236:

43. Անդ, էջ 237:

44. Զեռ. թիւ 6558, էջ 687թ:

45. Զեռ. թիւ 1187, ժ. 2, էջ 379թ:

46. Տես նոյն տեղում:

47. ԱԼԻՇԱՆ 1., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 134, ճնշ. թիւ 2: Հմատ. ԽԱԶԻԿԵԱՆ 1., Յիշատակարաններ, էջ 300-301, Հեռ. թիւ 749, ժ. 122թ:

յութիւնը, այլեւ ճշտեցին մի հեղինակային գործի պատկանելութիւնը եւս Կիրակոսին, եւ Յովհաննէսներից մէկի արիւնակցական - ազգակցական կապը նրա հետ՝ նրա եղբօրորդին լինելը։ Սակայն հենց այդ ձեռագրերից մէկի շնորհիւ է նաեւ, որ է՛լ աւելի ստոյգ է դառնում - բացատրում Կիրակոսի Երզնկացի լինելու հանգամանքը։

Ցայտնի է, որ միջնադարում հեղինակներն իրենց մականուններն ստանում էին տարրեր շարժառիթներով. այսինքն՝ այս կամ այն մականուն ունենում էր իր առանձնայատուկ ծագումը։ Այսպէս, ասենք, որեւէ մէկը կարող էր կոչուել Երզնկացի՝ բուն Երզնկայում ծնուած լինելու հետեւանքով, միւսը՝ 'ո՛չ թէ Երզնկայում, այլ նրա գիւղերից որեւէ մէկում, երրորդը՝ Երզնկայում երկար ապրած լինելու արդիւնքով, չորրորդը՝ բոլորովին ա՛յլ գաւառից եկած լինելով՝ Երզնկայի վանքերից մէկում սովորելու պատճառով, հինգերորդն ա՛յլ գաւառ կամ այլ քաղաք գնալով՝ տեղացիներից զատորոշուելու նպատակով եւ այլն<sup>48</sup>։

1334 թ. Երզնկայում գրուած եւ արդէն այլ առիթով վկայակոչուած թիւ 1379 ձեռագիրը, որի «սպասաւոր բանի» ստացողն ու գրիչներից մէկը, ինչպէս արդէն ասացինք, Կիրակոս Երզնկացին էր, ունի թորոս գրչի ու ծաղկողի հետեւալ ստուգաբանող լրացումը։

«Յիշատակեցէք զՄեծապարոն ի բարի,  
Որ ետ գրել զա յաւարական կամաւք ի լի,  
Սիրահարուստ վարդապետի,  
Ագրկցոյ Կիրակոսի,  
Վարդապետաց վարդապետի...»<sup>49</sup>։

Սրանով շահում ենք մի նոր տեղեկութիւն, մի մանրամասնութիւն եւս, որ հեղինակի ծննդավայրի վկայագիրն է։ Սա հիմք է տալիս ասելու, թէ Կիրակոսը բուն Լուսաւորչի կամ Եկեղեց գաւառից լինելով, ծննդեամբ Ագրկցի (Ագրակցի) է, որ յետագայում, ժամանակակիցներից շատերի նման, կոչուել է Երզնկացի, իր գաւառի մայրաքաղաք Երզնկայի անունով։ Ագրակը, որպէս Երզնկայի շրջակա գիւղերից մէկը, հետեւալ կերպ է յիշատակւում Համազասպ Ոսկեանի Եկեղեց գաւառի վանքերի նկարագրութեան մէջ, գրուած Զարչարանաց կամ Լուսաւորչի վանքի առիթով։ «Երզնկայի վանքերուն ամենամեծը եւ ամենահինն էր այս վանքը, որ կը գտնուէր Տուժիկ լեռնե-

48. Այս վերջին սովորութիւնը գեռ այսօր չէ պահպանուել է մեզ մօտ։ անկախ ծննդավայրից, գրսից նոր եկող մարդն իր լրջապատում ճանաչում է իր նոր եկած վայրի անունով, նոյնիսկ այստեղացի էլ կոչւում։ Մայրա Հոփիսիմէ Սրապեանը, որ բնիկ Երզնկացի էր եւ 1983 թ. Երեւան էր հանգրուանել Բաքուից, տեղի գուագրկիցի կողմից ճանաչում էր որպէս «Բաքուցի Մայրիկ», ի տարրեկութիւն «Ականցի մայրիկ» կամ «Երեւանցի մայրիկ»։

49. Զեռ. թիւ 1379, էջ 45բ։

րուն ստորոտը: ... քաղաքէն 4-5 ժամ կը քաշէր: Շինուած էր հարթ ու տափարակ դաշտագետնի մը վրայ: ... Ասոնցմէ զատ վանքը ունէր շատ մը սուրբերու նշանարներ, մագաղաթեայ սուրբ գրքեր եւ այլն: Ասոնք պահուած կը մնային մասնաւոր թաքստոցի մը մէջ...: Վանքին մէջ-տեղը ընդարձակ քառակուսի բակ մը կար, մէջը՝ աղբիւր, աւազան ու ճեմելավայր: ... անոր թեմական գիւղերէն են Մեղուցիկ, Ղարաթուշ, Ագրակ եւ Ճանկիչ...»<sup>50</sup>:

Կիրակոս Երզնկացու կեանքի եւ գործունէութեան մասին յայտնի բոլոր տեղեկութիւնները նրան ոչնչով չեն կապում Արեւելցի, Գանձակեցի կամ մէկ այլ մականուան հետ: Իր վաւերական գործերից եւ ո՛չ մէկում, ո՛չ վերնագրերում, ո՛չ էլ յիշատակարաններում՝ գրուած իր իսկ ձեռքով, նա չի՝ կոչում այլ կերպ, քան միայն Երզնկացի:

### Ե՞րբ է ապրել ու ստեղծագործել Երզնկացին

Արդէն խօսեցանք Կիրակոս Երզնկացու «Հարիւրաւորք»ի մեկնութեան մասին, սակայն այս աշխատութիւնն հարուստ է հեղինակի կենսագրութեան համար շատ արժէքաւոր ա՛յլ ծանուցումներով եւս, գրուած իր իսկ՝ Կիրակոս Երզնկացու ձեռքով: Այստեղ ասում է. «Ի յութէարիւր եւ յերեք (1354) թուականին Հայոց արարի զվերլուծութիւն Հարիւրաւորացս սուրբ հօրն Եւագրեայ»<sup>51</sup>:

Մեկնութիւնը 1354 թուին աւարտելու սոսկ այս փաստը թէեւ ինքնին բաւական չէ որոշելու հեղինակի ծննդեան ճշգրիտ թուականը, սակայն դրան օգնում են զուգահեռ տեղեկութիւններ, հնարաւորութիւն տալով յանգելու մօտաւոր եզրակացութիւնների: Անդրադառնալով մեկնութիւնն յանձն առնելու իր անելիքների հետ կապուած հանգամանքներին, Կիրակոսն յատուկ ուշագրութիւն է հրաւիրում իր տարիքի ու դրանով պայմանաւորուող գժուարութիւնների վրայ. «... արարի զվերլուծութիւն Հարիւրաւորացս սուրբ հօրն Եւագրեայ, տկար գոլով հոգուվ եւ մարմնով..., եւ անիմաստ եւ փոքրատար մտօֆ..., յաղագս որոյ կրկին աղաչեմ անմեղադիր լինել եւ եղբայրաբար զթերին ուղղել, զի միգապատ եւ խաւարեալ մտօֆ այդչափ կարացաք խօսել»<sup>52</sup>: Այստեղ՝ սկզբում ասում է նոյնիսկ, թէ արդէն «ամուլ» է միտքը<sup>53</sup>:

50. ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Բարձր Հայքի վանքերը, Վեհնա, 1951, էջ 101-102:

51. Զեռ. թիւ 1980, էջ 160ը:

52. Նոյն տեղում (ընդգծումները՝ Ա. Ա.):

53. Նոյն տեղում, էջ 42ա:

Սակայն որքան էլ տկար «Հոգւով եւ մարմնով», որքան էլ «ամուլ» «միգապատ եւ խաւարեալ մտօք», այսպիսի մի գործ կատարելու համար հազիւ թէ 85 տարեկանից աւելի լինէր: Ըստ այդմ պէտք է ենթաղրել, թէ նա կարող էր ծնուած լինել մօտաւորապէս 1270ական թուականներին: Այս եղրայանգումն հաւանական է դառնում նման ակնարկների գոյութեամբ՝ նրա անունով պահպանուած եւ ա'յլ աշխատութիւններում: Եւագը Պոնտացու «Յաղագս ութի խորհրդոյն» գործի վերլուծութեան իր նախաբանում կիրակոսը գրում է. «Իբրեւ ծանեայ զիւլնդիրս Զեր, պատուելի բարունակետ Յովհաննէս..., յոյժ ուրախացայ, զի բարի եւ գովելի մասինն ելէք փափաքող. սակայն, հայելով ի մտաց իմոց տկարութիւն եւ յիւր ողորմութեանցը մեծութիւն եւ բարձրութիւն, յոյժ գարհուրեցայ զի զոր պահանջէք ի մէն՝ ի վե՛ր է, քան զկար զօրութեան իմոյ...: Իսկ զուք վասն ի հնացեալ մեղօք ծերունոյն եւ ի տատասկացան երկրագործէ՝ պտուղ լուսոյ ինորէք եւ ի փոց՝ խաղող, եւ յապառած վիմէ՝ ջուր եւ կիւնաբեր հեղեղատէ՝ արդիւն ցորենոյ, ի յամուլ արգանդէ մտաց ծնունդ իմաստութեան»<sup>54</sup>:

Ինչպէս տեսնում ենք, թէ՝ առաջին եւ թէ երկրորդ գործերում կիրակոսն իրեն համարում է ծեր եւ միտքն ամուլ: Սակայն գրեթէ նոյնչափ խտացրած ու թանձրացրած գոյներով է ներկայացնում նա իր ծերութիւնը մի երրորդ գործում եւս, որ վերը նշած «Ընդհանրականն» է: Սրա վերջաբանում ասում է. «Վասն այնորիկ գրեցի զգիրքս քարոզիս ի կանոնացաց» եւ առաքեցի, «զի ես ծեր եմ եւ ո՛չ եմ կարող դալ առ Զեզ, եւ կու վախեմ գալ ի բոնութենէ այլազգեաց...: Իմ ծերութեան ալիքս ի Զեզ բարեխօս»<sup>55</sup>:

Զամշեանն այս առիթով ասում է. «Ի խոր ծերութեան իւրում գրեաց Թուղթ յորդորական իբրեւ զքարոզ եւ կանոն խրատուց առ ամենայն հայո...»<sup>56</sup>:

Ցաւօք, այս վերջին երկու գործում տարեթուեր չկան, ուստի փորձենք յարագերութեան մէջ զնել առաջինի հետ, ուր նշում է 1354 թուականը: Ընդունենք, թէ այս վերջին երկու գործն էլ՝ «Ութ խորհրդոյն» վերլուծութիւնը եւ «Ընդհանրական»ը կիրակոսը գրել է «Հարիւրաւորք»ից առաջ, մինչեւ 1354 թուականը: Անշուշտ դրանք չին կարող ստեղծուել միաժամանակ, նոյն տարիներին: Պէտք է, որ

54. Զեռ. թիւ 228, 1457, էջ 209բ-210ա (ընդհումներն՝ Ա. Ս.):

55. Զեռ. թիւ 8727, մէկ, 311բ-312ա, 3527, մէկ, 1748-1749, մէկ, էջ 157ա: Զարմանալիօրէն սերնից սերունդ շարունակւում էր նոյն իրավիճակը: Այս սողերն ուղղակիօրէն յիշեցնում են Յովհ. Երգնկացու ժամանակները, երբ նա եւս իր կանոնական խրատուներն առաքեց, վախենալով անձամբ շրջել՝ «վասն ժամանակիս դառնութեան եւ անհանգստութեան»: Տե՛ս ՄՐԱՊԵԱՆ Ա., Յովհ. Երգնկացի, Երեան, 1958, էջ 45:

56. ԶԱՄԶԵԱՆ Հ. Մ., Պատմութիւն Հայոց, հատ. Գ., Վենետիկ, 1786, էջ 508:

սրանց միջեւ ընկած լինի որոշ՝ ոչ քիչ ժամանակահատուած։ Եւ եթէ երեք այսպիսի խոշոր աշխատութիւններից յիւրաքանչիւրին տրամադրած լինի 3-4 տարի, ապա անթուակիր գործերից որեւէ մէկը պէտք է սկսած լինի 1342-45 թուերին։ Ստացում է այնպէս, որ արդէն այդ թուականներին իսկ նա իրեն ծեր է համարել։ Արդեօք առնուազն 60-65 տարու պիտի վինէ՞ր նա, այդ զգացողութիւնն ունենալու եւ այդպէս արտայայտուելու համար։ Հետեւանքը կը լինի այն, որ դարձեալ կը յանգենք նոյն եզրակացութեանը, նրա ծննդեան 1270ական թուականներին։ Ենթադրել, թէ վերը յիշուած անթուակիր գործերը «Հարիւրաւորք»ից յետոյ են գրուել, շատ աւելի քիչ է հաւանական։ Այդպէս դատելու հմբք են հանդիսանում ուրիշ թուական տուեալներ եւս՝ պահպանուած յիշատակարաններում։

Կիրակոսի աշակերտներից մէկը՝ Ստեփանոսը, 1355 թուին գրում է հետեւեալը. «Գրիցաւ սա ՊԴ (=1355) թուին, յամսեանն Օգոստոսի Դ, ի վայելումն եւ ի յիշատակ Գրիգոր արեղային<sup>57</sup>, գրոց աշակերտի եւ բանի սպասաւորի, որ ես գրել զսա յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց եւ ամենայն արեանառուաց եւ համօրէն իւր երախտեացն եւ սուրբ բարունապետացն իւրոց Կիրակոսի եւ Յովհաննիսի, որոց յիշատակն աւրհնութեամբ եղիցի եւ բանք նոցա առաւել պտղաբերեսցի եւ կենդանի աղօթք նոցա յամենայնի մեզ պարիսպ եղիցի»<sup>58</sup>։

Իր մասին գրիչը յայտնում է. «Ի սոյն աւուր եղեւ զրաւ սորա ի քաղաքս եղնկայ, ի ձեռն սուտանուն երիցու Ստեփաննոսի, ընդ հովանեաւ սուրբ տաճարիս, որ ծառով սուրբ Յակոբ կոչի»<sup>59</sup>։

Այս նոյն Ստեփաննոսը մի տարի յետոյ՝ 1356 թուին եւ նոյն վայրում, գրում է մի ուրիշ յիշատակարան եւս. «Յիշեցէք զերջանիկ եւ զերիցս երանեալ բարունապետն մեր զիրակոս վարդապետն, որ

57. Այս Գրիգորը եւս Կիրակոսի աշակերտն է, ինչպէս նշում է Ստեփաննոսն։

58. Զեռ. թիւ 3276, մէ, էջ 191ա։

59. Նոյն տեղում: Այս «Ծառով Սուրբ Յակոբը», կարծում եմ, պէտք է լինի Սեպուհ Լեռան բարձրաւանեակի վայ կառուցուած Ս. Լուսաւորչի վանքը՝ Աւագ վանքից երեք ժամուայ հեռաւորութեամբ։ Վանքի եկեղեցին (Գրիգոր Լուսաւորչին նուիրուած) ունի երեք խորան՝ Աւագ խորան եւ մէկական խորաններ աջ ու ձախ կողմերում, որոնք նուիրուած են Ս. Աստուածածնին, Ս. Լուսաւորչին եւ Ս. Յակոբին։ Եկեղեցին կառուցուած է իրբու թէ տեղն այն ծառին, որոն յեզած մեռած ըլլայ Ս. Լուսաւորչը։ Սոյն տաճարին մէջ կը ցուցուին անոր գերեզմանը ձախ բազկամասունքը եւ վզի խաչը՝ մէջը տառասկ մը։ Անշուշտ գրիչը տաճարը կոչում է «ծառով սուրբ Յակոբ», նկատի ունենալով ո՛չ միայն աւանդութիւնը, այլև չշփոթելու այն Երզնկայի Կայիրիսոսի կամ Կապոսի Ս. Յակոբի վանքի հետ, որը եւս տարբերակում էր յատուկ նշումով. «Ընդ հովանեաւ սրբոյ Յակոբայ Կապոսի»։ Տե՛ս ՈՍԿԵՑԱՆ Հ., Բարձր Հայքի վամինը, էջ 32-34, 71 (ընդգծումը՝ Ա.Ս.):

յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս... եւ գհարազատ նորին՝ զմիւս վարդապետն Յովանելէս, որ այժմ Աստուծով զմեղ հայրաբար խնամէ»<sup>60</sup>:

Ուրեմն «Հարիւրաւորք»ի մեկնութիւնից երկու տարի անց Կիրակոսն այլեւս չկար. հազիւ թէ այդ երկու տարում նա սկսած եւ աւարտած լինի որեւէ նոր գործ, ուստի հաւանական է մնում ծերութեան հասակում կատարած նրա վերջին գործը համարել «Հարիւրաւորք»ի մեկնութիւնը:

Որքան էլ ծեր համարելու լինենք, իր մահուան ժամանակ՝ 1356ին, երգնկացին հազիւ թէ 85 տարեկանից աւելի լինէր, քանի որ գրանից երկու տարի առաջ նա այնուամենայնիւ ի վիճակի է եղել կատարելու այնպիսի մի ծանր ու բարդ աշխատանք, որ եւագրի «Հարիւրաւորք»ի մեկնութիւնն է: Եւ եթէ ընդունելու լինենք, թէ նա մահացել է իր կեանքի 80-85 տարիների միջեւ, ապա դարձեալ մօտաւորապէս պիտի յանդենք նրա ծննդեան 1270ական թուականներին:

Սակայն անցնենք այս ենթագրութիւնն հաւաստիութեան մատեցնող այլ ուղղակի եւ անուղղակի փաստերի եւս: 1346 թուին ընդօրինակուած թիւ 2187 ձեռագրում պահպանուած է Կիրակոսի «Ի բանն, որ ասէ՝ Ձայն Տեառն ի վերայ ջուրց» աշխատութիւնը, որ վերջանում է հեղինակի հետեւեալ բառերով. «Խսկ մեք, ըստ մերում տկարութեանս առեալ ինչ պատճառս սուտաք բանիս, վստահանալով առաջի կատարելոց...»<sup>61</sup>:

1346ը աշխատութեան գրութեան թուականը չէ, այլ ընդօրինակութեան: Ուրեմն, դրանից առնուազն մի քանի տարի առաջ պէտք է գրուած լինի այն. մինչդեռ հեղինակն արդէն իսկ ինչ որ չափով տկար է համարում իրեն՝ լինի մտաւոր թէ մարմնական առումով, եթէ նոյնիսկ «տկարութիւն» բառն ընդունելու լինենք իր ուղղակի իմաստով: Եւ վերջապէս, 1320-1322 թուականներին արդէն ընդօրինակուած ենք գտնում Կիրակոսի փիլիսոփայական եւ խրատական աշխատութիւններից, որ կոչում են «Նախներգան ի բանն Աւետարանին. Ի սկզբանէ էր բանն» եւ «Բանք խրատականք»<sup>62</sup>: Ուրեմն, 1310ական թուականներին գրուած նշանաւոր ու խորիմաց գործեր, որոնք հեղինակի երախայրիքը չեն անշուշտ, եւ պահանջում են մտածողի հասուն միտք: 1320 թուին արդէն իսկ յայտնի փիլիսոփայական գործը դրսեւորում է մտքի այն մեծութիւնը, որ ունէր հեղինակը, չնորհիւ իր բազմակողմանի ու հմուտ իմացութեան՝ նախնի իմաստասէրների գործերի խորը քննութեան: Հարկաւ այդպիսի մի քանի հետազօտութիւնների յայտնի

60. Նոյն տեղում, էջ 191ա:

61. Զեռ. թիւ 2187, 1346, էջ 162բ:

62. Զեռ. թիւ 1098, էջ 110ա, 8356, էջ 176ա:

հեղինակը պէտք է որ 30 տարեկանից աւելի լինէր, ուրեմն ծնուած 1270ական թուականներին։ Սակայն կենսագրական ուրիշ տեղեկութիւններ եւս, ի վերջոյ, յանդեցնում են այդ եզրակացութեանը։

Մաշտոցեան Մատենադարանի թիւ 3931 ձեռագրում, գրուած 1309 թուին, Յովհաննէս գրչի ձեռքով եւ Կիրակոսի հրամանով, գտնում ենք հետեւեալ յիշատակագրութիւնը. «Ո՞վ եղբայր Կիրակոս, խոշորութեան եւ սխալանաց անմեղադիր լեր, զի երկու դաս առաջի եղեալ կայ, տաքնապիմ...»<sup>63</sup>:

Նման մի յիշատակութիւն ունի եւ Վենետիկի մի Ոսկեփորիկը. «Ո՞վ արքա իմ եւ տէր, րաբունի բարի եւ իմաստուն, համայն ցանկալի Կիրակոս, զսակաւ գծեալս ընկալ ի մէնջ եւ զքո աղքատս հոգով Յովհաննէս մի՛ մոռանայր ի մաքրափայլ յաղօթս քո, իսկ գրոյս անմեղադիր (լեր), զի կար իմ այսչափ էր»<sup>64</sup>:

Գրչի նոյն մտերմիկ շեշտը եւ խնդիրքը՝ անմեղադիր լինելու կամ չմոռանալու իրեն, ենթադրել է տալիս, թէ երկու յիշատակարանների գրիչն էլ նոյն անձնաւորութիւնն է, իսկ պատուիրատուն՝ նրա հօրեղբայրը, որ դեռեւս կոչում է միայն րաբունի: Այս յիշատակարանները մասսամբ հիմք են տալիս յայտնելու այն կարծիքը, թէ Կիրակոսը րաբունապետ է դարձել 1309-1315 թուերի միջեւ՝ որեւէ տարի: Սակայն եթէ նոյնիսկ 1317 թուից էլ ընդունելու լինենք նրա րաբունապետութիւնը, ապա դարձեալ կը յանդենք նոյն ելակէտին. այդ տարիներին Կիրակոսը պէտք է լինէր ոչ պակաս քան 40 տարեկան, որ լրացնում է 1270ական թուականները նրա ծննդեան մօտաւոր շրջանը համարելու մեր ենթադրութիւնը:

Այսպիսով յանգում ենք այն եզրակացութեան, որ Կիրակոսն ապրել ու ստեղծագործել է 1270ական թուականներից մինչեւ 1350ական թուականները. մահուան թուականն է 1356ը:

Երզնկայի մասին ձեռագրերում պահպանուել են յատուկ Աշխարհացոյցեր, որոնց մէջ ասւում է. «Ծուրջ վանորէից եւ ուխտատեղաց» կան շատ գերեզմաններ: Սրանց շարքում յիշատակւում է նաեւ Կիրակոս Երզնկացու թաղման վայրը, որ Ս. Գէորգ վանքի տարածքում է. «... եւ սուրբ Գէորգ, որ Երկանի վանք ասի. եւ է երկու եկեղեցի, մինն Ս. Գէորգ եւ միւսն Ս. Աստուածածին. եւ ի՞ն (24) գերեզման կայ վարդապետաց. մինն Կիրակոս Երզնկացին, որ Արեւելք շարականն ասաց...»<sup>65</sup>: Գրիչն, անշուշտ, թուել է նշանաւորներին միայն, (դրանց մէջ նաեւ Յովհաննէս Պլուզ Երզնկացուն), որով-

63. ԽԱԶԻԿԱՆ Լ., Յիշատակարաններ, ԺԴ, էջ 61:

64. Տե՛ս նոյն տեղում: ՍԱՐԳԻՍԵԱՆ Բ., այս Ոսկեփորիկի գրութեան մօտաւոր թուականն է համարում 1230-1295ը: Տե՛ս Ցուցակ, Հա. Բ., էջ 874:

65. Տե՛ս ձեռ. թիւ 8727, էջ 433ա-434բ:

հետեւ ցաւով յայտնում է, թէ կան, «եւ այլ վանքեր եւ մասունք եւ դամբարանք բազումք, որ ոչ կարացաք գրել»<sup>66</sup>:

Այսպիսով Երզնկացի Կիրակոսը մէկ ընդմիշտ սահմանագատում է միւս Կիրակոններից ե՛ւ իր ծննդեան վայրով ու ապրած ժամանակով, ե՛ւ իր մահուան թուականով ու թաղման վայրով, եւ ստեղծագործութեամբ ու գործով:

Առաջին հաւաստի խօսքը Կիրակոս Երզնկացու մասին ասում է Երզնկացի Յարութիւն Քիւրտեանը, իր «Երիզա եւ Եկեղեց գաւառ» աշխատութեան մէջ, յատուկ զլովի յատկացնելով նրան: Զնայած որոշ անճշտութիւնների ու չհիմնաւորուած եզրայանգումների, բեղուն ու ջանասէր գիտնականը ճշտօրէն եզրակացնում է, թէ Կիրակոսը ծնուել է 1275-1280ի ատենները, մահացել՝ 1356ին<sup>67</sup>:

Կիրակոս Երզնկացին իր ժամանակի մատենագրական արձակի ու չափածոյի ճանաչուած դէմքերից մէկն է. նրա արծարծած հարցերը չեն սահմանափակուել միայն հասարակութեան դրական ճաշակի բարձրացմամբ, այլեւ լայնօրէն ծառայել են նրա գաղափարական-քաղաքական կեանքի ու աշխարհայեցութեան կազմաւորմանը, լայնացրել եւ խորացրել աշխարհաճանաչութիւնն ու իմացութիւնն, հաստատել հայրենասիրութիւնը եւ կոփել յանուն դրա մղուող պայքարի կամքն ու տոկունութիւնը: Այդ ընթացքում զրսեւորուել է եւ ինքը՝ հեղինակը, որպէս խորաթիկանց մտածող, Հոգեբան, գեղագէտ, փայլուն հռետոր, այլեւ համարձակ, անվախ ու մարտնչող ազգային գործիչ:

Կիրակոս Երզնկացուն նուիրուած բանասիրական ճշգրտումները լայն առումով լրացնում են միջնադարեան նշանաւոր մատենագիրների ու բանաստեղծների շարքը, նեղ առումով խտացնում Երզնկայի համալսարաններն աւարտած մեծերի փայլուն համաստեղութիւնը՝ Յովհաննէս Պլուզ, Կոստանդին, Յովհաննէս Մործորեցի, ինչպէս նաև Մովսէս, Գրիգոր, Միհիթար, Թորոս, Գէորգ, Մարտիրոս Երզնկացիներ եւ ուղիւներ:

### ԱՐՄԵՆՈՒՀԻՄԻ ՄՐԱՊԵԱՆ

66. Տե՛ս ձեռ. թիւ 8727, էջ 433ա-434բ:

67. Տե՛ս ՔԻՒՐՏԵԱՆ 8., Երիզա եւ Եկեղեց գաւառ, էջ 255-336:

## Résumé

### QUELQUES PRECISIONS PHILOLOGIQUES AU SUJET DE KIRAKOS YERZENKAC'I

ARMENOUHI ERZENKAC'I SERAPIAN

Kirakos Erzenkac'i est bien connu mais pas trop étudié. A son sujet nous avons des opinions contradictoires sur sa personne, sur la période de sa vie, sur sa production littéraire. Très souvent il fut identifié avec Kirakos Gandzakec'i ou bien avec Kirakos Arevelc'i et la date de sa mort fut considérée 1271/1272. On l'a même mis au XII<sup>e</sup> siècle l'identifiant avec Kirakos T'argmanic. D'autres l'on fait arriver jusqu'au XV<sup>e</sup> siècle.

Fondé sur les bases de sources manuscrites, l'Auteur, par des vérifications minutieuses (cfr. *Patmabanasiarakan Handes*, Erevan 1972, n. 4/59, p. 137) affirme son origine d'Erzenka et le sépare complètement des autres Kirakos, soit dans le temps que dans l'œuvre.

Le grand et fameux philosophe, écrivain, commentateur, pédagogue, poète, Kirakos Erzenkac'i est né entre 1270/1280 à Agrak (Agarak) dans la province de Ekeliac'. Il a vécu et opéré donc entre les XIII<sup>e</sup> et XIV<sup>e</sup> siècles et il est mort à Erzenka en 1356. Sa tombe se trouve dans l'ensemble du Monastère de Erkan, S. Gevorg. La précision de la personnalité et de la période de Kirakos Erzenkac'i est très importante pour définir l'héritage précise de son œuvre littéraire et pour redonner ses droits d'auteur sur des œuvres très variées qui avait été attribuées aux autres Kirakos. Pour la solution du problème ont énormément contribué les prologues, les épilogues, les colophons et les annotations écrites dans les manuscrits ou de sa propre main ou à son sujet, spécialement de la part de son propre neveu et collaborateur, Yovhannes.

Sur ces donnés, Kirakos Erzenkac'i est considéré comme un des plus illustres écrivains de son époque soit en poésie qu'en prose et qui ne s'est pas contenté à éléver le goût littéraire de ses contemporains mais il a aussi contribué à la construction de la conscience civique et politique de son peuple lui faisant connaître des horizons plus larges, des connaissances plus profondes, donnant au patriotisme arménien un sens et une force irréductible. C'est donc en cette perspective qu'il faut mettre la personnalité de Kirakos Erzenkac'i, comme penseur, psychologue, amateur de tout ce qui est beau, brillant réthoricien et surtout homme d'action pour la cause nationale.